

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան



Տեղական Հսկողության և
Հաշվետվողականության ծրագիր (*LCAP*)
LCAP նպատակ #6-ի և #7-ի վերանայում
Մարտի 27, 2019

Նպատակ #6 - Մշակել և իրականացնել մասնագիտական
զարգացման համապարփակ ծրագիր բոլոր
աշխատակիցների համար

Ընթացիկ LCAP աջակցություն
Լրացուցիչ դրամաշնորհ
Հիմնական դրամաշնորհ

Վերանայել նյութերը

**Նպատակ #6.1 - Շարունակել մասնագիտական
վերապատրաստում հատկացնել բոլոր ուսուցիչների և
աշխատակիցների համար**

*Մասնագիտական վերապատրաստման ցուցակ ամբողջ տարվա
համար*

Հատուկ հանձնարարությամբ նշանակված ուսուցիչներ (TOSAs)

Նպատակ #6.2 – Շարունակել հակաահաբեկչական և իրազեկման դասընթացներ տրամադրել ուսուցչների և աշխատակիցների համար

2017-2018

- 2017 թվականի նոյեմբերին, կազմակերպվեց հակաահաբեկչական իրազեկման ընտրովի 2 ֆորում:
- 2018 թվականի մայիսին տեղի ունեցած բարեկեցության 1-ին սիմպոզիումի ընթացքում ևս կազմակերպվեց հակաահաբեկչական իրազեկման ընտրովի դասընթաց:
- Հակաահաբեկչական ակտի զեկուցումը, շրջանի օրենքները, իրազեկման մեթոդները և ռեսուրսները թարմացվել և ներբեռնվել են շրջանի կայքում, որը կապված է բոլոր դպրոցների հետ:

Նպատակ #6.2 – Շարունակել հակաահաբեկչական և իրազեկման դասընթացներ տրամադրել ուսուցչների և աշխատակիցների համար

2018-2019

- Մինչև 2019 թվականի մայիսը, ԲԴՄՇ-ի բոլոր աշխատակիցները, անձամբ կամ համացանցի միջոցով, պարտադիր պարապմունք են անցել:
- Հակաահաբեկչական պատահարի մանրամասն զեկուցում և համապատասխան աղյուսակ է կազմվել բոլոր ադմինիստրատորներին ուսուցանելու համար:
- Միջնակարգ դպրոցների PBIS թիմերը պարապմունք են անցել հակաահաբեկման իրազեկման համար:
- Հակաահաբեկչական ակտի զեկուցումը, շրջանի օրենքները, իրազեկման մեթոդները և ռեսուրսները թարմացվել և ներբեռնվել են շրջանի կայքում, որը կապված է բոլոր դպրոցների հետ:
- 2019-2020 ուսումնական տարվա համար, մշակվում է տնօրենների գործիքի տուփը լրացուցիչ ռեսուրսներով:

Նպատակ #6.3 – Շարունակել վերապատրաստման դասընթացները GATE ծրագրում դասավանդող ուսուցիչների համար

- GATE Համագործակցում - դաս/դասընթացի նախագծում
- ԲԴՄՇ-ի GATE ծրագրի կոնֆերանս
- Ներածություն շնորհալի աշակերտներին դասավանդելու համար
- Շնորհալի աշակերտների մասին առասպելներ և իրականություն
- Հասկանալ և փոխել շնորհալի աշակերտների անբավարությունը
- Պաշտոնական քննություն
- Հետաքրքրության կատարելագործում
- Կառուցել ճանաչողական միտք
- Շնորհալի պատանիներ
- Հարցերի առաջարկման արդյունավետ մեթոդներ
- Դասարանում ստեղծել առավելագույն աճի միջավայր

Նպատակ #6.4 – Շարունակել մշակել և իրագործել համապարփակ մասնագիտական վերապատրաստման ծրագիր բոլոր այն աշխատակիցների համար, ովքեր աջակցում և դասավանդում են հատուկ կարիքներ ունեցող աշակերտներին ամենաքիչ սահմանափակ միջավայրում

- Հատուկ Ուսուցման Գլխավոր ծրագիրը (Կրթական գրասենյակի կողմից հաստատվել է 11/15/17) հատուկ ուսուցում է հատկացնում ընդհանուր ուսուցման ուսուցիչներին, հատուկ կարիքներ ունեցող աշակերտներին սովորական դասարանում աջակցելու համար:
- Ընդհանուր ուսուցման 15 ուսուցիչներ, որոնք աջակցում են միջնակարգ դպրոցի համագործակցական դասարաններին, լրիվ օրվա դասընթաց են ունեցել Հարավային Կալիֆոռնիայի Ախտորոշիչ Կենտրոնի կողմից: Դասընթացի թեման էր, Ներառական Գործածությունները, թե ինչպես աջակցեն հատուկ կարիքներ ունեցող աշակերտներին ընդհանուր ուսուցման դասարանում:
- 2018 թվականի կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին Ներառական Գործածությունների 2 ճյուղերը:
- Շրջանը համագործակցում է Ֆուրիլ SELPA-ի հետ 2 օրով Ներառական Գործածությունների դասընթաց հատկացնել 19/20 ուսումնական տարվա ընթացքում:

Նպատակ #6.5 – Ապահովել բոլոր աշխատակիցների վերապատրաստումը ինքնասպանությունների կանխարգելման ընթացակարգերի վերաբերյալ

2017-2018

- «Թարգետ Սոլուշնս» ընկերության միջոցով, համացանցային պարտադիր դասընթաց է տրվել բոլոր աշխատակիցներին, որը ներ էր առնում թարմացված գործընթացներ, ռիսկի տակ գտնվող աշակերտներին (ինչպես նաև աշխատակիցներին) օգնելու համար:
- 2018 թվականի մայիսին կայացած բարեկեցության 1-ին սիմպոզիումի ընթացքում անցկացվեցին ընտրովի դասընթացներ երեխաներին օգնելու վերաբերյալ: Ահա թեմաները. օգնել երեխաներին հաղթահարել դժվարությունները, ընկերություն, հմտությունների զարգացում և ինչպես հասկանալ մանկական անհանգստություն ու սթրեսը:
- Ռեսուրսները, օգնող հեռախոսակապերը և համացանցային անվճար լրացուցիչ պարապմունքները թարմացվել են շրջանի կայքում, որոնք կապված են բոլոր դպրոցների կայքերի հետ:

Նպատակ #6.5 – Ապահովել բոլոր աշխատակիցների վերապատրաստումը ինքնասպանությունների կանխարգելման ընթացակարգերի վերաբերյալ

2018-2019

- «Թարգետ Սոլուշնս» ընկերության միջոցով, համացանցային պարտադիր դասընթաց է տրվել բոլոր աշխատակիցներին, որը ներ էր առնում թարմացված գործընթացներ, ռիսկի տակ գտնվող աշակերտներին (ինչպես նաև աշխատակիցներին) օգնելու համար:
- 2018 թվականի հոկտեմբերին, ընտրովի 2 դասընթացներ են կայացվել ինքնասպանության կանխարգելման վերաբերյալ և ինչպես օգտվել միջամտման և կանխարգելման ռեսուրսներից:
- 2019 թվականի փետրվարին անցկացված բարեկեցության 2-րդ սիմպոզիումի ընթացքում ընտրովի վերապատրաստում հրամցվեց իրազեկության մեթոդների և ինքնահասկացողության վերաբերյալ:
- Ռեսուրսները, օնգոդ հեռախոսակապերը և լրացուցիչ համացանցային անվճար պարամունքները թարմացվել են շրջանի կայքում, որոնք կապված են բոլոր դպրոցների կայքերի հետ:
- Օգնող հեռախոսակապերի համարները նշված են միջնակարգ դպրոցի բոլոր աշակերտների անձնական քարտի վրա: 2019-2020 ուսումնական տարում այդ նույն հեռախոսահամարները կնշվեն 7-12 դասարանցիների անձնական քարտերի վրա:
- 2019-2020 ուսումնական տարվա համար մշակման մեջ է դրվել տնօրենների գործիքի տուփը, որը կպարունակի լրացուցիչ ռեսուրսներ վնասվածքների և վերականգնման վերաբերյալ:

Նպատակ #6.6 – Շարունակել մշակել և իրականացնել
կրթական տեխնոլոգիայի մասնագիտական
վերապատրաստման ծրագիր

*17-18 ուսումնական տարվա ընթացքում,
կրթական գրասենյակը ներկայացրեց
ուսուցողական տեղնոլոգիայի գլխավոր
ծրագիր առաջին փորձանմուշը:*

*Այն սպասողական վիճակի մեջ դրվեց,
կրթական գրասենյակի կողմից, մինչև
Ֆինանսավորման աղբյուր գտնելը:*

Նպատակ #7.1- Շարունակել մաքուր, անվտանգ և արդյունավետ էներգիայի կրթական միջավայրով ապահովել բոլոր աշակերտներին և աշխատակազմին:

- Ա.** Վերանորոգման բաժինը դռների վրա փականներ է տեղադրում, որոնք փակվում են ներսից ընդամենը մեկ բութ մատի օգնությամբ:
- Բ.** Առանց բանալիի, վահանակի միջոցով, ներս մտնելու փականներ են տեղադրվել երեխաների խնամքի կենտրոններ անվտանգությամբ մտնելու համար:
- Գ.** Այժմ դպրոցներն ունեն անվտանգության լրացուցիչ առանձնահատկություններ մուտքերի մոտ, որոնցից են տեսախցիկները և թարմացված էլեկտրոնային մուտքի համակարգը: Այս պահին CDS-ը վերանայման մեջ է:
- Դ.** Բոլոր դպրոցները ունեն LED նոր լույսեր:

Նպատակ #7.2- Շարունակել իրականացնել 10-րդ դասարանի աշխարհի պատմության ուսումնական ծրագիրը, որը ընդգրկում է հայոց ցեղասպանության թեման

- Շեշտադրումը դնել աշխարհի պատմության վրա, որը կընդգրկի 3 օրվա դաս նվիրված մասնավորապես հայոց ցեղասպանությանը:
- Նաև, շոշափել ցեղասպանության թեման 3 օրվա դասի ընթացքում:
- Ընդունման գործընթացի մեջ է նահանգի կողմից ընդունված նոր թեման, որի մեջ է ընդգրկվում հայոց ցեղասպանության ծրագիրը:

Նպատակ #7.3 – Շարունակել իրականացնել և մշակել 11-րդ դասարանի ամերիկյան պատմության ծրագիրը, որն ընդգրկում է LGBTQ (լեզբուհի, գեյ, երկսեռ, փոփոխված սեռի և հարցական) համայնքի կատարած ներդրումները Կալիֆոռնիայի և ԱՄՆ-ի պատմության մեջ

- Աշխարհի պատմության դասը ավարտել է 3 օրվա դաս, որը ընդգրկել է LGBTQ և հաշմանդամներ թեման:
- ԱՄՆ-ի պատմության դասը ավարտել է 3 օրվա ուսումնասիրության դասը:
- Ընդունման ընթացքում է նահանգի կողմից ընդունված նոր թեման, որի մեջ է մտնում հայոց ցեղասպանության կրթական ծրագիրը:

Նպատակ #7.4 – Շարունակել համոզվել, որ բոլոր դպրոցների անվտանգության ծրագրերը համապատասխանում են Կալիֆոռնիայի կրթական գրասենյակի անվտանգության ծրագրի նորմերի հետ և դասերը սկսվելուց առաջ, մասնագիտական վերապատրաստում հատկացնել բոլոր աշխատակիցների համար

- Բոլոր դպրոցների համապարփակ անվտանգության ծրագրերը (2019-2020 ուս. տարվա համար) արտացոլում են Կալիֆոռնիայի Կրթական օրենսգրքի 32280—32289 կետերի պահանջված բաղադրիչները և համապատասխանում են ԲԴՄՇ-ի Կրթական օրենքի BP 0450 կետի և վարչական կարգավիճակի AR 0450 կետի հետ:
- Բոլոր ծրագրերը հաստատվել են Կրթական գրասենյակի կողմից 2019 թվականի փետրվարի 21-ին և տեղադրված են շրջանի կայքում:
- 2018-2019 ուս. տարվա մասնագիտական վերապատրաստումը ներ էր առնում հետևյալը.
 - 2018 թվականի նոյեմբեր ամսին աղետի արձագանքի ընտրովի դասընթաց է տրամադրվել Բրբենք քաղաքի հրդեհային վարչության կողմից:
 - 2018 թվականի օգոստոսին, հոկտեմբերին և 2019 թվականի հունվարին և փետրվարին, ակտիվ վտանգի պարտադիր վերապատրաստման դասընթացներ են տրամադրվել բոլոր աշխատակիցներին:
 - 2018 թվականի հունիսին, նոյեմբերին, դեկտեմբերին և 2019 թվականի մարտին առաջին բուժօգնության ծառայություններ են տրամադրվել բոլոր աշխատակիցներին:
- 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում կմշակվի գործիքների տուփ տնօրենների համար, որը կպարունակի արտակարգ իրավիճակների պլանավորման վերաբերյալ լրացուցիչ ռեսուրսներ:

Նպատակ #7.5 – Շարունակել զարգացնել անվտանգ և աջակցող միջավայր փոփոխված սեռի աշակերտների համար

Շրջանի «Անվտանգ և Հոգատար դպրոցի միջավայր»-ի կոմիտեն ամսեկան ժողովներ է գումարում և օգտագործելով «Ամբողջական դպրոց, ամբողջական համայնք, ամբողջական երեխա» մոտեցումը մեթոդներ է մշակում, որոնք աջակցում են դպրոցին, որպես անվտանգ և արդյունավետ աշխատավայր աշխատելու, ուսում ստանալու և հյուրընկալելու համար:

- Որոշ դպրոցներ ստեղծել են ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏԻ LGBTQIA աշակերտներին աջակցելու համար:
- Վերանայվել են շրջանի օրենքները LGBTQIA և նմանատիպ խմբերին արտացոլելու համար:
- 2017 թվականի նոյեմբերին տեղի ունեցավ հակաահաբեկչության հանրային ֆորումը, տրանսգենդեր և բոլոր աշակերտների հետ կապված հարցերը պարզելու համար:
- Մ-12-րդ բոլոր դասարաններում իրականացվում է Դրական Վարքի Միջամտության և Աջակցության (PBIS) մեթոդները, որոնք արտացոլում են բարելավված սոցիալական, զգացմունքային և վարքային աջակցություն բոլոր աշակերտների համար:

Նպատակ #7.6 – Վերահսկել, թարմացնել և փոփոխել
շրջանի օրենքները համապատասխանություն մտցնելու
համար

- Կրթական գրասենյակի և վարչական կանոնակարգերը կանոնավոր կերպով փոփոխում են ըստ Կալիֆոռնիայի Դպրոցական խորհրդի գրասենյակի որոշման:
- Կրթական գրասենյակի ներկայիս օրենքները և վարչական կանոնակարգերը տեղադրված են շրջանի կայքէջում:

Նպատակ #7.7 – Շարունակել իրականացնել կառուցման/արդիականացման ծրագրերը՝ Ընդհանուր Պարտականությունների պարտատոմսի իրականացման ծրագրի համաձայն և զարգացնել պահպանման ծրագիրը

- Ա. Ս պարտատոմսի նախագծերի մեծամասնությունը ավարտված է: Դիզնի տարրական դպրոցում պետք է տեղադրվի 2 հարկանի շենք, ինչպես նաև խաղահրապարակ և խոտի տարածք, որը կտեղափոխվի և կմեծանա:
- Բ. Ծրագրի պլանավորումը վերաջացել է, ներառնելով նոր մոդուլային դասասենյակների տեղադրումը Մքինլի, Հարթ, Ստեվենսոն և Ջեֆֆերսոն դպրոցներում: Դիզնի դպրոցի շինարարությունը պետք է ավարտվի մինչև 2021 թվականի աշունը:

Նպատակ #7.8 – Առողջության, սնուցման և սպորտի դասընթացներով ապահովել բոլոր աշակերտներին, որը կնպաստի ֆիզիկական և հոգեկան բարեկեցությանը և առողջ ապրելակերպին

- Շրջանի «Ֆիզիկական ակտիվության բարեկեցության և սնուցման» (PAN) կոմիտեն տարեկան 4 ժողով է գումարում և վերանայում շրջանի բարեկեցության ընթացիկ ծրագիրը համոզվելու համար, որ այն ընդգրկում է նահանգային և դաշնային օրենքները սնուցման, սննդամթերքի և ընպելիքների սննդային արժեքի և առողջ ֆիզիկական գործունեության ուղեցույցները, որոնք ընդգծված են «Ամբողջական դպրոց, ամբողջական համայնք, ամբողջական երեխա» մոտեցման մեջ:
- 6-րդ դասարանի գիտության ծրագիրը կներառի դասընթաց սնուցման վերաբերյալ:
- 6-րդ դասարանի գիտության ծրագիրը կօգնի նաև ընտրել և իրականացնել նոր դասընթաց նվիրված արբուսնքին (սեռական հասունությանը):
- 8-րդ դասարանի գիտության և 9-րդ դասարանի առողջության ծրագրերը կիրականացնեն «Խոսք դեռահասների համար» ուսումնական նոր ծրագիրը Կալիֆոռնիայի երիտասարդական առողջապահական ակտի հետ համապատասխանելու համար:

Նպատակ #7.9 – Շարունակել իրականացնել Հոգեկան Առողջության և Բարեկեցության ծրագիրը բոլոր աշակերտների, նրանց ընտանիքների և աշխատակիցների համար

Շրջանի «Հոգեկան Առողջության Խորհրդատու Կոմիտեն»-ն (MHAC) ամսեկան ժողով է գումարում «Հոգեկան Առողջության և Բարեկեցության ծրագրի 3 տարվա ծրագրի» վերաբերյալ տեղեկացնելու և աջակցելու համար:

- Աշակերտների խնամքի կենտրոնները, որոնք գործում են 2 մինջնակարգ դպրոցներում, շարունակական համայնքային համագործակցությամբ, նվազեցնում են հոգեկան առողջության ծառայություններ ստանալու խոչընդոտները:
- Շրջանի բարեկեցության բաժինը աջակցում է ծրագրի նպատակների իրականացմանը, բազմաթիվ ձևերով տեղեկություն և ռեսուրսներ է հատկացնում, որոնք ներբեռնվում են նաև շրջանի և դպրոցների կայքերում:
- Ամեն տարի անց է կացվում հոգեկան առողջության և դպրոցի միջավայրի հարցադրում:
- Սոցիալ/հուզական կրթական ծրագիրը իրականացվում է տարրական դպրոցներում, իսկ PBIS ծրագիրը՝ 5-12 դասարաններում, որը ապահովում է աշակերտների կրթական և սոցիալական կարիքները:
- Բարեկեցության տարեկան սիմպոզիում և լրացուցիչ ամսեկան իրազեկման կրթական միջոցառումներ են հրամցվում ԲԴՄՇ-ի համայնքին:
- Թարմացվում են ինքնասպանության կանխարգելման օրենքները, որոնք ուղեկցվում են մասնագիտական վերապատրաստմամբ:

Նպատակ #7.10 – Մշակել աշխատանքի ընդունելու ծրագիր, որը աշխատանքի կընդունի բարձր որակավորում ունեցող, տաղանդավոր և արդյունավետ աշխատողների

- Աջակցել նոր ուսուցիչներին աշխատանքի ընդունման ծրագրով
- Աշխատանքի ընդունվելու համացանցային գործիքներ
- Ընդլայնել համագործակցումը համալսարանների հետ
- Ավելացնել աշխատկիցների մասնագիտական վերապատրաստման միջոցները
- Աշխատանքի որոնման համացանցային հավաք
- Պահպանել և ընդլայնել շրջանի բարեկեցության գործընկերներին
- Աշխատել աշխատանքի գործընկերների հետ բանակցություններ վարելիս